ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 931-Ա/Ք «09 » 07 2013թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել հանրակրթական դպրոցի <<Բարոյագիտություն>> առարկայի ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2013թ.հուլիսի 9-ի N931-Ա/Ք հրամանի

<<ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
<<ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐ
(10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Բարոյագիտություն» առարկայի ծրագրի մշակման համար հիմք են ծառայել ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Հանրակրթության պետական չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Դասընթացի նպատակն է սովորողներին ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել հայ պատանու բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

ա) Սովորողներին ծանոթացնել.
- բարոյագիտության հիմնական հասկացություններին (կատեգորիաներ), բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին,
- բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին
- բարոյականության և ազատության հարաբերությանը
- ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին,

բ) ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին,

գ) նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը

դ) բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից,

ե) վերլուծել բարոյականություն հասկացութան տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները,

ե) ընդլայնել սովորողների մտահորիզոնը,

<<Բարոյագիտություն>> (10-րդ դասարան) առարկայի դասավանդմանը հատկացվում է շաբաթական 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
<<ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐ

(10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)
(34 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Բարոյագիտության առարկան: Բարոյագիտության բովանդակությունը և խնդիրները: Բարոյագիտությունը և հասարակագիտական մտքի այլ ուղղությունները: Բարոյագիտությունը և գեղագիտությունը: Բարոյագիտությունը և իրավունքը: Բարոյագիտությունը և քաղաքականությունը: Բարոյագիտությունը և արվեստը:

Բարոյագիտության՝ իբրև գիտության առանձնահատկությունները: Բարոյագիտության դերը հասարակության հոգևոր կյանքի վերափոխման, նրա բարքերի առողջացման և կատարելագործման խնդիրների իրացման գործում: Բարոյագիտության խնդիրները:

ԲԱԺԻՆ Ի. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ (11 ժամ)

Թեմա 1. Հասկացողություն բարոյագիտության կատեգորիաների մասին: (1 ժամ)

Բարոյականության կատեգորիաները որպես առավել ընդհանուր հասկացողություններ: Բարոյագիտության հիմնական կատեգորիաները: Բարոյագիտության կատեգորիաների վերաբերյալ մարդկանց պատկերացումների բնույթը պատմական տարբեր դարաշրջաններում:

Թեմա 2. Բարին ու չարը: (2 ժամ)

Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: (1 ժամ)

Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: (1 ժամ)

Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: (2 ժամ)

Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: (2 ժամ)

Թեմա 7. Երջանկություն. Սեր: (2 ժամ)

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

ԲԱԺԻՆ II. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ և ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ (3 ժամ)

Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: (2 ժամ)

Հասկացողություն բարոյականության մասին: Բարոյականության լայն և նեղ ըմբռնումները: Բարոյականությունը որպես արժեքային-գործնական հարաբերություն: Բարոյական նորմեր և պահանջների համընդհանուր բնույթը:

Բարոյական գիտակցություն, բարոյական հույզեր և զգացմունքներ, համոզմունքներ, բարոյական գործունեություն, բարոյական հարաբերություններ, բարոյական վարք, բարոյական կուլտուրա:

Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: (1 ժամ)

Բարոյականության իմացական գործառույթը: Բարոյականության կարգավորող գործառույթը: Բարոյականության դաստիարակչական գործառույթը: Բարոյականության արժեքային-կողմնորոշող գործառույթը:

ԲԱԺԻՆ III. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)

Թեմա 10. Անձը և համակեցությունը: (1 ժամ)

Անձի ինքնավարությունն ու ինքնուրույնությունն հասարակության մեջ: Բարոյականը որպես սոցիալական վարքագիծի կարգավորիչ:

Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: (2 ժամ)

Հասարակական կարծիքի դերը բարոյականության գործառնության մեջ:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

ԲԱԺԻՆ IV. ԱՆՁԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ (6 ժամ)

Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը (2 ժամ)

Բարոյական գիտակցությունը որպես մարդու կողմից իր վարքի նորմերի գիտակցումը՝ էթիկական պահանջների հասարակական իմաստի ըմբռնման և ընդունման հիման վրա: Բարոյական գիտակցության բաղադրիչները: Բարոյական մտապատկերներ և հասկացություններ, բարոյական հայացքներ, զգացմունքներ, համոզմունքներ, բարոյական իդեալներ, բարոյական արժեքային կողմնորոշումներ, բարոյական ռեֆլեքսիա:

Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը (1ժամ)

Բարոյական գործունեությունը որպես բարոյական նպատակներին գիտակցաբար ենթակա արարքների համակցություն: Բարոյական գործունեության կառուցվածքը. նպատակ-դրդապատճառներ-եղանակներ-միջոցներ-արդյունքներ: Անձի բարոյական գործունեության տեսակները:

Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները (2 ժամ)

Բարոյական հարաբերությունների կարգավորող և դաստիարակչական ֆունկցիաները: Անձի բարոյական հարաբերությունների դրսևորման հիմնական ոլորտները:
Հաղորդակցություն: Խոսակցի անհատական առանձնահատկությունների հաշվառումը հաղորդակցման գործընթացում. վստահություն, բարացկամություն, անկեղծություն, քաղաքավարություն, տակտ…:

Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը (1 ժամ)

Հասկացողություն բարոյական արժեքների մասին: Դրանց կապը անձի բարոյական պահանջմունքների, նպատակների, գործունեության, հարաբերությունների հետ: Բարոյական արժեքների կապը կրոնական, գիտական, իրավական և այլ արժեքների հետ: Բարոյական արժեհամակարգը: Բարոյական արժեքները և բախումները: Բարոյական ռեֆլեքսիա:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

ԲԱԺԻՆ V. ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ և ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ (4 ժամ)

Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: (2 ժամ)

Համաշխարհայնացման (գլոբալիզացիա) էությունը, դրսևորումները, հոգևոր-մշակութային հետևանքները: Գլոբալացման բացասական հետևանքները և համամարդկայինի և ազգայինի փոխհարաբերության հիմնահարցը:

Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: (2 ժամ)

Բարոյականություն և ազգություն:

ԲԱԺԻՆ VI. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ (2 ժամ)

Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն: (2 ժամ)

Գործարար էթիկա, մեդիա էթիկա, բնապահպանական էթիկա:

ԱՄՓՈՓՈՒՄ (1 ժամ)

Գրականություն

1. *Разин А. В. Этика. М, 2003,*
2. *Дробницкий О. Понятие морали. М., 1974*
3. *Мур Дж. Принципы этики.М.,1984.*
4. *Этика Учебник под ред. А. Гусейнова и Е. Дубко. М., 2000*
5. *Этика. Конспект лекций. М., 2002*
6. *Словарь по этике*